ՍԻՈՆ

1939 ❖ ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ ❖ ԹԻՒ 3-4



ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ Ա. ՊԱՏՐԻԱՐՔ

ՀԱՆԳԻՍՏ

ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ Ս. ԱՐՔԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆԻ

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

1874 – 1939

Ս. Յակոբեանց Մխիթարեանները, խորունկ վշտով և անմբեխիթար սուգով, կը յայտնէ եղերական մահը իր սիրեցեալ հօր, և մեծանուն Պետին, Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկ. Գուշակեանի, որ հանգեաւ ի Տէր Փետրվ. 10, ուրբաթ երեկոյեան ժամը 7.15ին։

Իրմով կ'անհետանայ Ս. Աթոռս երախտիքով ու փառքով գրաւող Գահակալը, մէկը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ արի և անվկանդ Հովուապետներէն, և հայ ժողովուրդի աղնուագոյն և բազմաշնորհ զաւակներէն։

Կորուստը որ կը հարուածէ Մխիթարեանս, աւելի քան աղէտ մըն է. վանդի Տ. Թորգոմ Ս. Պատրիարքը կ'էր նոյ իր գործի կէս ճամբուն, իր ետին ձգած լուսաւոր ակօս մը, որ ահա կ'ընդհատուի այնքան անակնկալ և վաղահաս կերպով։ Անոր եօթնամեայ պատրիարքութեան հետ կապուած եղան մէկէ աւելի ընդարձակ և հեռահայեաց ձեռնարկներ, եկեղեցական, վանական, կրթական, գրական և տնտեսական մարզերու վրայ. ձեռնարկներ՝ որոնցմէ շատերուն լիակատար իրագործման համար, դեռ տարիներով իր առաջնորդութիւնն ու սատարը անհրաժեշտ էին։

Կ'ողբանք իր մահուան մէջ, կորուստը մեծ և պաշտելի հօր մը՝ որ տարիներ շարունակ իր սիրովը և հոգածութեամբ, ինչպէս նաև արթնութեամբ և լրջութեամբ խնամարկեց Ս. Յակոբեանց Միաբանութիւնը։

Կ'ողբանք մեր նոր ժամանակներու սրբազան բեմին ոսկեբերան քարոզիչը, մեր հանրային և խմբական հանդիսութեանց հմայիչ ատենաբանը, մեր եկեղեցական և աշխարհիկ կրթութեան հոգեւանդն և նախանձաւոր ղեկավարը, և մեր հոգեւոր բարձրագոյն հաստատութեանց նուիրեալ և բազմերախտ ուսուցիչը։

Կ'ողբանք մեր ոսկեղենիկ բարբառը գանձարանող, և մեր անցեալին համագրական տեսանող հմուտը։ Մեր սրբազան և ազգային գրականութեան հոգեզգած կշռադատը, և «Սիոն»ի անխոնջ և հեղինակաւոր խմբագիրը։

Կ'ողբանք մեզմէ յաւերժօրէն բաժնուող ամենէն յարգուած, և ամբողջ հայութեան վստահութիւնը գրաւող մեծ անձնաւորութիւնը, եւ անփոխարինելի այն արժէքները որ իր հետ գերեզման իջան։ Մեր վիշտն ու կսկիծը չեն ամոքուիր, ցորչափ իր մեկնումով գոյացած բացը կը մնայ։

Աղօթենք եւ մաղթենք որ Տէրը լոյսերու մէջ հանգչեցնէ իր քաղցր հոգին, եւ Հայաստանեայց սգաւոր եկեղեցւոյ եւ բազմակարօտ ազգին շնորհէ նման մեծ հովուապետներ ի սպաս և ի փառս Իրեն։

Ու մենք, իր սգակիր զաւակները Ս. Յակոբեանց Առաքելական Ուխտին, մեր մեծ վշտին մէջ, և անով իսկ նոր կորով զգեցած՝ կ'ուխտենք իր անմոռանալի յիշատակին առջև, շարունակել իր սուրբ և ազգանուէր գործը, հաւատարիմ իր ոգիին։

Օրհնեալ ըլլայ իր յիշատակը։